ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվականի N 12

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ,,ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԱՉԱՋՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.19113ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ /ՎԿԱՅԱԿԱՆ N01082023-11-0067, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 11-013-0253-0052/ ՄԻ ՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, 30.11.2023Թ N148 ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի ավագանու՝ <<Տավուշի մարզ, Իջևան համայնք, Աչաջուր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.19113հա մակերեսով հողամասի /վկայական N01082023-11-0067, կադաստրային ծածկագիր 11-013-0253-0052/ մի մասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին>> 30.11.2023թ N148 որոշմամբ նշված հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսականից փոփոխվել է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների, իսկ իսկ գործառնական նշանակությունը այլ հողատեսքից՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների: Ավագանու նշված որոշումը հակասում է ՀՀ քաղաքաշինության մասին օրենքին և ՀՀ Տավուշի մարզի <<Տավուշ-2>> միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման <<Աչաջուր համայնքի քաղաքաշինական գոտիավորման նախագծին>>, որի <<Աչաջուր համայնքի հողերի նպատակային նշանակության փոփոխությունների գծագրով>> այդ հողամասի մի մասը գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքից տրանսֆորացվել (ԳԲ-9, 0.52հա մակերեսով հողամասի մի մաս) բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Գոտիավորման նախագծով հաշվի է առնվել նաև ՀՀ կառավարության 25.12.2005թ. N2404-Ն որոշմամբ սահմանված՝ բնակավայրերից դուրս տարածքներում միջպետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների համար կողային տեսանելիության պահանջը՝ 18.0 մետր, հաշված երթևեկելի մասի եզրից: Սույնով խնդրվում է տալ համաձայնություն վերը նշված ավագանու որոշումը անվավեր ճանաչելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզի <<Տավուշ-2>> միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման <<Աչաջուր համայնքի քաղաքաշինական գոտիավորման նախագիծը>>, և ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջներով.

Համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն՝ ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի ավագանու <<Տավուշի մարզ, Իջևան համայնք, Աչաջուր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.19113հա մակերեսով հողամասի /վկայական N01082023-11-0067, կադաստրային ծածկագիր 11-013-0253-0052/ մի մասի

նպատակային նշանակությունը փոփոխելու մասին>> 30.11.2023թ N148 որոշումն ճանաչել անվավեր:

2.Սույն որոշումից բխող հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -18 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹԱԲԵԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ԱՅՎԱԶՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԱՍԻԼՅԱՆ ՄԵԴՈՐԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ԲՈՒՂԴԱՐՅԱՆ ՄՀԵՐ

ԵՊԻՍԿՈՊՈՍՅԱՆ ՌԱՉԻԿ

ՀԱՄԶՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՂԱԶՈՒՄՅԱՆ ՄԱՆԵ

ՂԱԼԹԱԽՉՅԱՆ ԱՐՄԱՆ

ՃԱՂԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԵՀՐԱԲՅԱՆ ԱՆՈՒՇ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԶՊԵՏ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՋՈՅԱ

ՋԱՆՎԵԼՅԱՆ ՆԱԻՐԻ

ՍԱՐՀԱՏՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՎԱՐՇԱՄՅԱՆ ՎԱՀԵ

ՎԻՐԱԲՅԱՆ ՆԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ